

*Emile Jiraud*-ն երեւի իր քաղաքի ծայրում գտնւող բնակարանի առաւելութիւններն ու յարմարութիւնները թեւելիս պիտի լինի: Այսպէս թէ այնպէս, պ. *Jiraud*-ի առաջարկը միաձայն ընդունւեց, քանի որ կատարելապէս համապատասխանում էր մեր նախորդ վճռին: Ճապոնացին մի *galant* շարժումով ցոյց տւեց ինձ իր փոքրիկ կառքը. ես նստեցի, ինքը լծւեց ու շարժեցինք առաջ, ընկերներս էլ մեր ետեւից: Նախ ամեն ինչ լաւ էր գնում, քանի որ մենք անց էինք կենում ընդարձակ լայն փողոցներով, ուր շարժում էր ամբոխը, վազում էին ջիները ու զանգահարում էին տրամվայները: Վերջը ընկանք կողմնակի փողոցներ, ուր կեանքը մեռած էր, եւ որոնք ոչ մի կերպ չէին ուզում վերջանալ:

–Իսկ որ խիստ խուլ անկիւնումն է ապրում այս պարոն *Jiraud*, – մտածեցի ես:

Իմ ուղեկիցներս մի թեթեւ երկիւղով նոյն իսկ ակնարկեցին, թէ միգուցէ մեզ մի անկիւն տանեն, որտեղից այլեւս դուրս գալ չը կարողանանք: Բայց ահա յարդէ գլխարկը շուռ եկաւ յանկարծ մի վերջին անգամ էլ. մենք մտանք մի բազ ու կանգ առանք մի փոքրիկ միյարկանի տնակի առջեւ: Տնակից մեզ էին նայում երկու ճապոնուհի եւ մի երկարահասակ ճապոնացի իր անսովոր խիտ ու սեւ բեխ ու միրուքի միջից:

–Ահա վերջապէս մի ճապոնացի, որ բեխ ու միրուք ունի, – մտածեցի ես զարմանալով:

Մեր փոխադարձ լռիկ ուսումնասիրութիւնը տեւեց մի քանի վայրկեան, մինչեւ որ ես սիրտ առայ ու խզեցի այդ լռութիւնը, հարցնելով, թէ խօսում է ֆրանսերէն:

–*Mais oui, Melle*, – պատասխանեց երկարաբեխ ճապոնացին զուտ պարիզեան արտասանութեամբ: